

ՄԱՀԳՈՅԺ

1. ԲԺ. ԼԵՒՈՆ ՏԻԳՐԱՆԵԱՆՑ

«Ընդդէմ»-ում տպուած հեռագրից իմանում ենք, որ փետր. 16-ին Երևանում վախճանուել է մեր աշխատակից բժ. Լևոն Տիգրանեանը, որ յայտնի էր որպէս հասարակական գործիչ և գրականագէտ:

Հանգուցեալը երկար տարիներ վարել է Երևանի քաղաքային իրաւասուի և Հայոց թեմական Դպրոցի հոգաբարձուի պաշտօնները. 1891-ին ընտրուեց քաղաքագլուխ, բայց մի տարի վարելուց յետոյ աքսորուեց Ռուսաստանի խորքերը:

Գրականութեան մէջ նա յայտնի է որպէս խմբագրող «Առողջապահական թերթ» ամսագրի և իբրև աշխատակից հայ թերթերի. նա մի ժամանակ աշխատակցում էր «Մուրճին», ուր տպեց Գէօթէի «Փառուտի» և «Էգմօնտի» թարգմանութիւնները, իսկ վերջին 5—6 տարի նա աշխատակցում էր «Լուսաշին», ուր նորա գրուածներից աչքի են ընկնում «Տօրկուստօ Տասսօի թարգմանութիւնը և Դօրպատի հայ ուսանողների մասին իւր յիշողութիւնները, իսկ այս համարում մենք տպուած ենք նորա մի ընդարձակ «ուղևորութիւնից» մի հատուած «Մըրիկը Մասիսի վրայ», իսկ հետևեալում կտանք մի այլ հատուած «Միծեանակարբրդը» վերնագրով, իսկ ամբողջ աշխատութիւնը մենք վերագարծրինք իրան հեղինակին իւր ցանկութեամբ քանի մի փոփոխութիւններ մտցնելու համար:

Հանգ. Տիգրանեանցը տպած ունի առանձին գրքերով նաև մի քանի աշխատութիւններ, որոնցից գլխաւորն է Հուգօ Պօլի «Բժշկարանի» թարգմանութիւնը իւր բազմաթիւ փոփոխութիւններով ու յաւելուածներով:

Մենք կաշխատենք մի այլ անգամ երկար խօսել այդ եռանդուն և յիշատակի արժանի գործիչ մասին: